«ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

12.08.2016 13:13

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացնում է **«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագիրը:**

Ծրագրի **սեպտեմբեր ամսվա** փուլին մասնակցելու համար հայտարարվում է **փաստաբանների մրցույթ:**

Ծրագիրը ներառում է 3 ինքնուրույն բաղադրիչներ (ուղղություններ).

ա) անվճար իրավաբանական խորհրդատվություն մարզերում ***(բաղադրիչ 1),***

բ) անվճար իրավաբանական խորհրդատվություն քրեակատարողական հիմնարկներում ***(բաղադրիչ 2),***

գ) անվճար իրավաբանական խորհրդատվություն վարորդներին ***(բաղադրիչ 3):***

Բաղադրիչ 1.

Սեպտեմբեր ամսվա ընթացքում Լոռու և Շիրակի մարզեր այցելություններ կազմակերպելու և քաղաքացիներին անվճար իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Լոռու և Շիրակի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար **(8-րդ և 9-րդ խմբեր):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քաղաքացիաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից, Լոռու և Շիրակի մարզերից:**

Բաղադրիչ 2.

Սեպտեմբեր ամսվա ընթացքում «Վանաձոր» և «Արթիկ» քրեակատարողական հիմնարկներ այցելություններ կազմակերպելու և ազատազրկման մեջ գտնվող անձանց իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ թվով **6 փաստաբաններ** ընտրելու համար՝ **Երևան քաղաքից թվով 4 փաստաբաններ, Լոռու և Շիրակի մարզերից 1-ական փաստաբաններ** ընտրելու համար **(8-րդ և 9-րդ խմբեր):**

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 2 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **քրեաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները **Երևանից, Լոռու և Շիրակի մարզերից:**

Բաղադրիչ 3.

Սեպտեմբեր ամսվա ընթացքում վարորդներին անվճար իրավաբանական խորհրդատվություն մատուցելու համար ՀՀ փաստաբանների պալատը հայտարարում է մրցույթ՝ թվով **3 փաստաբաններ** ընտրելու համար **(5-րդ խումբ)**:

Մրցույթին կարող են մասնակցել առնվազն 3 տարվա փաստաբանական գործունեության փորձ ունեցող **վարչաիրավական** ուղղվածությամբ փաստաբանները:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել դիմում-հայտ (էլեկտրոնային նամակ)՝ կցելով Ձեր ինքնակենսագրությունը (CV) անգլերեն և հայերեն լեզուներով՝ այն ուղարկելով info@advocates.am կամ lyudvik.davtyan@gmail.com էլեկտրոնային հասցեներին:

Դիմում-հայտերը և կից փաստաթղթերը ՀՀ փաստաբանների պալատ կարող են ներկայացվել նաև փաստաթղթային եղանակով:

Դիմում-հայտում անհրաժեշտ է նշել այն բաղադրիչը և մարզը, որին մասնակցելու համար ներկայացվում է հայտը, ինչպես նաև այն մարզը, որտեղ գործունեություն է իրականացնում դիմող փաստաբանը:

Դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետն է 2016 թվականի օգոստոսի 26-ը:

«Անվճար իրավաբանական խորհրդատվություն» դրամաշնորհային ծրագրի բովանդակությունը, ծրագրին մասնակցող փաստաբաններին ներկայացվող պահանջները, մրցույթի կազմակերպման հետ կապված մանրամասները նկարագրված են **ծրագրում**:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք կապ հաստատել ծրագրի համակարգող փաստաբան Լյուդվիկ Դավթյանի հետ կամ զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ:

Ծրագրի համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան

Փաստաբան, իրավ. գիտ. թեկնածու

էլ. փոստ՝ lyudvik.davtyan@gmail.com

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })